

7581

1
5
81

910.4
L-81

ՊՐԵՐԱԾԵՐ

ՈՒՂԵՐԱՌՈՒԻԹԻՒՆ

ՀԵՐՆՈԳՈՐԻԱՅՈՒՄ

Թ. Ա. Բ.

ԵԿԱԶԱՐՈՒՍ ՏԵՐ-ԵՐԵՏԵՔԵԱՆ.



Թ. Ի. Գ. Լ. Խ. Ա.

Ճշշրամ Մ. Ճշրամկ || Թիվ. Մ. Շարաձե.

1893

13281


ՈՒՂԵԿՈՐՈՒԹԻՒՆ

ՉԵՐՆՈԳՈՐԻԱՅՈՒՄ

ՊԵՐ ԼՕՏԻ

I.

ԲՈԱՑԻԽԻՑ ՄԻՆՉԵԻ ԿԱՏՏԱՐՈ.



Дозволено цензурою, Тифлисъ, 15-го Марта 1893 г.

2004



6070
39 Q

օացիխը, որտեղից սկսւում է մեր ճանապարհորդութիւնը, մի քանի չնչին ձբկնորսական տնակներից բաղկացած փոքրիկ գիւղ է, Կատարօի նաւահանգստի մուտքից ոչ հեռու, Առն-Թէօդօ ծովախորշի ափին՝ ցըիւ ընկած խրճիթներով. Նախ քան եւրոպական նաւատորմղի ալստեղ ժամանելը Բօացիխը բոլորովին մի անձանօթ վայր էր:

18...., Հոկտեմբերի 21, կիբակի օր. Առաւատեան Հինգժամին նաւաստիները գալիս մանում են նաւի խցիկները և արթնացնում են չորս սպաներին, որոնք պիտի գնային ջետինիէ. Նիկաղայոս իշխանի մալրաքաղաքը:

— 4 —

Նրանց զարթեցնելով՝ սպասաւորները լայտնեցին, որ եղանակը զարհուրելի է:

Յիրաւի, վերևից լսում էր քամու վնկվնկոցը. դա Բորէասն էր սուլում և շաշում:

Երկինքը խիտ բռնուած է ամպերով. աղջումզջալին խօլ խաւար է:

Սպաները կամալակամայ հաւաքւում են ճանապարհութու:

Ցետինիէ ընկնելու համար Բօացիիից, որի գիմաց տեղաւորուել է եւրոպական նաւատորմիզը, պէտք է ամենից առաջ դուրս գալ Կատտարօ. այստեղից պէտք է նախ գնալ Զերնոգօրական ճանապարհով, որ պարզ օրերին երեւում է հեռուից, սպիտակ ժապաւէնի նման հսկայական կոմաններով ընկած տիտանական մռայլ պատուարի երեսով:

Վեց ժամն է. Ժամանակը անցնում է. լոյսը բացւում է. սակայն դեռ չի երևում այն նաւակը, որ դեռ երէկ Մաթէօն պատուիրել է բերելու Բօացիիցի մի քանի ընտիր թիավարներին:

Մի ժամ էլ զուր անցաւ. մինչեւ երեկոյ մենք Ցետինիէ չենք ժամանիլ:

Խորհուրդ ենք տնում մեր մէջ և որոշում ենք ինքներս գնալ Բօացիի ու որոնել մեր թիավարներին:

Ահա Մաթէօն իր երեք ընկերներով թափառում է ափին տարակուսած. նրանց կարծիքով երևի եղանակը խիստ գէշ է...

Մենք ստիպում ենք նրանց. նրանք վճռում են. Թողնում են նաւակը, մենք ուղի ընկանք:

Մի կերպ թիավարում ենք ափերը քերելով. ծովաչը ազի ցալքուները զարնում են մեզ. մենք թրջում ենք մինչեւ մեր ոսկըները...

Մենք մօտենում ենք մի փոքրիկ հրուանդանի, որի մօտ կարձես ծովածոցը վերջանում է, բայց այստեղ սկսում է

մի ընական նեղ ջրանցք ժայռերի մէջ պարփակուած: “Իրա յետին ծալրումը Փանտաստիկական կերպով բարձրանում է գորշ, վիմային ահագնատեսիլ մի զանգուած, որ ասես ամբողջ աշխարհը վակում էր մեր աչքի առաջ. մենք պիտի այդտեղ հասնենք. այս ջրանցքով կըմտնենք Կատտարօի նաւահսնգիստը, որ շրջապատուած է քարէ պատուարով, ինչպէս մի Հռովմէական ջրամբար:

Ասել չի ուղիլ, որ Բորէասը սուլում շաշում է ինչպէս անցողական քամի մի հսկայ սրահի միջով:

Հողմն աղաղակում է և փչում է գիմացի կողմից ուղղակի մեր երեսներին. ծովը ճերմակել է փրփրագէզ ալիքներից:

Ինչքան էլ որ մենք գօր ենք տալիս, այնու ամենայնիւ մեր նաւակը յետ ու յետ տալիս, փոխանակ առաջ տանելու: Մենք դիմում ենք դէպի ժայռերը, ուրիշ ճար ըլկայ...

Սակայն Մաթէօն իր ծրագիրն ունի. նա մտադիր է կողքի թիավարելով կարապի նման կտրել ջրանցքը, հակադիր ափին իջնել և ապաստան գտնել մի փոքրիկ ծովախորշում:

Մենք հասնում ենք այդ ծոցը իսպառ թրջուած: Մաթէօն կապում է նաւակը և հրաւիրում է մեզ ցամաք դուրս գալ:

Ափովն ընկած այս նեղ կածանով, ասում է նա, մենք մի երկու ժամում կը ժամանենք Կատտարօ: Բարեբախտաբար մենք գիմացկան մարդիկ ենք. արագ-արագ քայլելով նաւափարների համար այնքան երկիւղալի այս նեղուցի ափով, շուտով մեր առաջը բացւում է Պերաստօ գիւղը, որ կած է մի ահագին սրածայր վիմասարի ստորոտին. ահա վերջապէս և Կատտարօն իր բոլոր փառահեղութեամբ:

Զարմանալի տեղ է Կատտարօի նաւահանգիստը. սրա տեսարանը փոփոխուում է եղանակի հետ. հիմա, այս մռայլ առաւտօտեան, նա ունի վայրենի և ազդու կերպարանք:

Ամեն տեղ սարեր, բարձրութիւններ, սեպացած ժայռեր,

կատարներ, գրգուած ամպերով, իսկ մեղ մօտ ամեն ինչ սա-
ղարթուն կանաչով ծածկուած. անտառները ծածկում են լեռ-
ների զառիթափ լանջերը, ուլանում են դէպի երկինք և կոր-
չում են գորշ թուփերի մէջ:

Մգագոյն ձիթենիները աչքի են ընկնում ծառերի նը-
կարչական խմբերի մէջ իրենց ոսկեգոյն աշնանալին տերե-
ներով և նարինջի այգիների թարմ կանաչների մէջ:

Ամեն կողմն երեւում են հին, փոքրիկ գիւղեր, գարեոր-
եկեղեցիներ, հինորեայ վանքեր. միքանիսը ցցւած են հա-
մարեա անմատչելի գագաթների վրայ, միւսները թագնուած-
են հովիտներում վիթխարի կաղնիների տակ:

Այստեղ այնպէս խոր և մթին են ծործորները, ստուեր-
ները այնքան թանձր և մոյգ, գոյներն այնքան պայծառ, որ
թւում է թէ տեսսրանը ուղղակի նկարուած է, որպէս մի
պատկեր՝ չափազանց մեծացրած, մուայլ և ֆանտաստիկական
ոճով լորինած:

Հակադէմ չերնօգօրական ափը բոլորովին այլ պատկեր է՝
տիսուր, նսեմ և ամայի տեսարանով: Ոչ անտառ կայ, ոչ կա-
նաչ. մերկ կատարները ել աւելի բարձր են և զառիթափ ու
ցից: Գլուխ պտտեցնող, աչքերը մթնեցնող բարձր, վիմակուռ,
բնական պարիսապները թագնուած են իրենց կատարներով ամ-
պերի մէջ. նսեմ քարաժարերը, ալրուած ու խանձուած-
ոկզնական երկրի հրով և այգպէս անփոփոխ մնացած մին-
չե հիմա, լիշեցնում են իրենց գոյնով հանգած կրակարան,
մի քարացած թոհ ու բոհ՝ հզօր ձեռքով ձգուած օդերի-
տարածութեան մէջ:

Սակայն, ներքեւում, ջրի մօտ՝ դեռ էլի կարելի է որոշել
գիւղեր և ձիթենի անտառակներ, որոնք կարծես կուճ են
եկած և երկիւղից կապած են ահռելի վիմագէղերի ստորատին.
Ջրանք աւստրիական գիւղեր են, որոնք դեռ Դաղմատիային
են պատկանում, իսկ Զերնօգօրիալի սահմանն անցնում է
սե զայած ժայռերի բուն ծալըներով:

Զերնօգօրիան գտնուում է բոլորովին վերի մասում, այդ
տիտանական տերրասի բուն վերեւում:

Այն կանաչագեղ ափը, որով մենք գնում ենք՝ շատ բազ-
մամարդ է: Լեռնային շաւիղի երկու կողմից երեսում են այ-
գիներ, գիւղեր, զանգակատներ. Հարուստների հինաւուրց
դաստակերտներ, զանազան ձեի պատշգամբներով և դռներով,
ազնուականների ապարանքներ, հիմա պարապ մնացած և
խարխւած, դրանք մնացել են վենետիկեան տիրապետութեան
ժամանակից և այժմ աղքատների սեպհականութիւն են
գարձել:

Դաղմատացիները ասեղնագործ տօնական զգեստներով
խմբուած են եկեղեցիների մօտ, պատարագի զանգը տուած է:

Հանդիպում ենք նմանապէս օրիորդների, որոնք երեա-
կալում են թէ զուգուած են մօդայով և պարոնների՝ գերմա-
նական կերպարանքով:

Փջում է սառը քամին և բոլոր այս մարդիկ կարծես դո-
ղում են ամբողջ մարմնով ու խեղճ պատկեր են ներկայաց-
նում ձմեռնալին, ցուրտ երկնքի տակ: Մեր վրայ նայում են
հետաքրքրութեամբ: Մաթէօն և երեք թիավարները հետե-
ւում են մեզ, բարձած մեր պայուսակները և վերաբկուները:
մենք ութ անձից բաղկացած մի կարստան ենք կազմում և
գնում ենք արագ քալըներով. բազմութիւնը երեւում է չի
կարողանում ըմբռնել թէ ուր ենք մենք շտապում:

Գիւղերում մենք սակարկութիւն ենք սկսում շինական-
ների հետ նոր թիավարներ վարձելու, վասն զի քամին քիչ
հանդարտել է և մենք կը կամենալինք ջրով շարունակել մեր
ուղին: Սակայն ամենքն էլ պնդում են, թէ եղանակը շատ
գէշ է և մերժում են մեր առաջարկը:

Կամայ-ակամայ ստիպուած ենք լետիոտն շարունակել:

Ահա երկու ժամ է, որ մենք գնում ենք ոտով, այս
մեր ծրագրում չըկար: Մեզ պատահում է մի տղայ, որ ծա-
խում է քաղցր բլիթներ և եփած մակարոն: Փառք Աստու-

ծոյ, սոված չենք մեռնիլ... Մեր գէմը երեռում է կրկին՝ Կատարօն. նա նմանապէս տեղաւորում է Զերնօգօրիալի ստորոտում և իր պատնէշները, տաճարները կարծես թէ քաջաճների շէնքեր են՝ համեմատելով գորշ ժայռերի հրեշաւոր ահագին կոյտերի հետ։ Չոր ճանապարհով դեռ բաւական տարակալ ենք նրանից. վերջապէս մեր բախտից գտնւում են երկու հին նաւաստիներ, որոնք համաձայնում են մեզ նեղուցով տանել Կատարօն։

Մենք նստում ենք նրանց նաւակում. երեք ժամ թիավարելուց և ծովային նորանոր սրսկումների ենթարկուելուց յետոյ՝ մենք ոտ ենք դնում քաղաքի ծովափին։ Բարեքախտաբար հենց առաջին փողոցում մեզ հանդիպում է այն անձը, որին փնտում էինք, ոմն պ. Դանադօնօվիչ, Նիկողայոս իշխանի գործակալը. Մաթէօն ճանաչում է նրան և կանգնեցնում է։ Այս ալարոնը՝ Փրանսիացու պէս հագնուած՝ շատ սիրալիր կերպով յայտնում է մեզ, որ շուտ-ընդ-փոյթ մեր ձիերը և ուղեցոյցը պատրաստ կըլինին։

Կատարօնի լաբիրինթոսի նման փոքրիկ փողոցներով մենք ուղղում ենք մեր քայլերը գէպի «Որսկան» կոչուած հիւրանոցը։

Քաղաքի ամեն մասերում, որտեղից էլ որ գէպի վեր նայես, ամեն տեղ կըտեսնես տներից վերև գարհուրելի բարձրութեան վրայ ամպերը խոնուած լողում են երկնակամարով և ժայռեր, որոնք կարծես հիմա որտեղ որ է կըթափուեն նայողի գլխին. այդ ամենը մի առանձին կերպարանք է տալիս հինորեալ, նեղ փողոցներին։ Մի շատ հին տան մէջ՝ որ երկի դարձեալ Վենետիկեան շէնք է, գտնւում է ճաշատունը, ուր յաճախողները խօսում են մի քանի լեզունելով. ահա այդ է «Որսկան» հիւրանոցը։

Լսում է սլաւօնական բառբառ, իտալական խօսակցութիւն և ծանրագանդաղ գերմանական լեզու, որով մի քանի

աւստրիական սպաներ զրուցադրութեան մէջ են մտած գէր, շէկ ու ճերմակ գերմանուհի սպասուհիների հետ։

Նախաճաշեցինք մեծ ախորժակով, ապա մեզ տուին մըրգեղէն, որ տեղական լեզուվ կոչւում է jardinetto, այսինքն պարտիզակ. դա մի մեծ սկուտեղ է, լի տեսակ-տեսակ մըրգերով, բլիթներով և պանրով։ jardinetto-ից յետոյ մեր առաջն են դուրս գալիս երկու քաջակաղմ չերնօգօրցիներ, կեղտոտ և գրգլեկներով ծածկուած, ականջներին օղեր, աւազակային դէմքով, դաշոյնների և ատրճանակների մի ամբողջ զինարան գոտիկը քաղած։ Դրանք մեր ուղեցոյցներն են, որոնց զրկել է Փամադօնօվիչը։ Նրանք յարգանքով վերցնում են իրանց կարմիր գդակները և յայտնում են մեղ իտալերէն, որ ձիերն սպասում են մեզ Կատարօնի գուների մօտ և որ պէտք է աճապարել։



Սա դէպի երկինք տանող ճանապարհն է, ասում է ուղեցոյցը: Յիրաւի, դա նման է մի տլդպիսի բանի: Ճանապարհի կռմանները սողում են դէպի վեր, նրանք կպած են անհեթեթ բարձրութեան և վիթխարի ժայռապատի կողերին. մենք համրում ենք ալդ պտոյտները տասը, քսանը, լիսունը, վերջապէս հաշիւը կորցնում ենք, իսկ նրանց վերջը չի երևում. նրանք անյալտանում են ամպերի մէջ: Ամեն մի շրջանն անելուց մենք մի քանի մետր վեր ենք բարձրանում. հորիզոնն ընդարձակում է, օդը դառնում է աւելի մաքուր և աւելի պաղ: Այն ահագին քերձը, որին կպած է Կատարօի բերդը, սկզբում թւում էր իբր թէ մեր ետևից վեր է սողում, վեր է ելնում, ձգւում է դէպի վեր, մեզնից յետ չէ մնում: Յետոյ մենք նրան թողնում ենք ներքեւ, նա սկսում է ցածանալ, փոքրանալ և անյալտանում է իր աշտարակներով և հին օձի նման գալարւած պատերով՝ և վերջապէս կորչում է այն քաօսի մէջ, որ գոյանում է մեզնից ցած, ներքեւներում:

Մենք արդէն շատ բարձրումն ենք. երեմն բացւում է մեր առաջ անծալը տարածութիւն: Մեր շուրջը լոկ վիթխարի վիմալին պատեր են, սրածալը գագաթներ, տիտանական անդուդներ, մութ կիրճեր. ժայռերից պոկուած անհամար քարերի ամբողջ վիժուածք շառաչելով թափւում է և անյալտանում խոր՝ ներքեւի խաւարի մէջ. այնպիսի սեպացած, սոսկումն ազդող ժայռեր կան, որոնց վրալից ամբողջ աշխարհը կարող է ընկնել կործանուել անդունդների մէջ: Մեզանից ներքեւ լողում են ամպերը, իսկ մեր գլխավերեւը գեռ էլի երևում են խոշոր-խոշոր ցցուած ժայռեր. դրանց ծերպերում և փափարներում ապաստանուած են քամիների ձեռից փախուստ տուած մութ ամպի հատուածներ, որոնք փանտաստիկական ստուերներ են տարածում շրջակալքում:

Նատ ցուրտ է: Մենք մտնում Զերնօգօրիա. ահա սահմանը. ուղեցոյցները մեզ ցոլց են տալիս սահմանագծի վրայ

II

ԿԱՏՏԱՐՈՒՅ ՄԻՆՉԵՒ ՆԵԳՈՒՅ



տատարօի դարպասի մօտ գտնում ենք չորս ձի. ուղեցոյցները մեր և իրենց սակաւ իրենները բարձրում են նրանց վրայ և մենք շարժւում ենք յառաջ: Ուղեցոյցները հետեւում են մեզ յետիուն: Ֆրանսիացիները գաղափար անգամ չունին, թէ ինչ տեսակ ոտներ ունին չերնօգօրցիները. այս երկը տղամարդիկ և կանայք ամբողջ օրը առաւտօտից մինչև երեկոյ անդադրում կարող են նիհար կատուի նման մագլցել այս ապառաժների փափարներով և չըլոգնել ամենևին:

Կատարօի դարբառը նայում է մի խոր և մթին կիրմի՝ լեռնային աշխարհի բուն ներքեսում. այստեղից է սկսւում չերնօգօրական ճանապարհի կոմանը, որ կարծես մի ահագին սողուն վիշապ է, պոչն է այստեղ, իսկ գլուխը ծածկուած է վերսի բարձրութիւններում:

Մենք սկսում ենք մագլցել դէպի վեր. մենք նմանում ենք այն մարդկանց, որոնց խելքին վիշել է բարձրանալ հազար մետրանոց պատի վրայ և նայել ինչ կալ նրա՝ ետեւ:

եղած նշանը. դա ճանապարհի եզրին տնկած մի վէմ-քար է, վերան քերած խաչի նշանը:

Եթէ որ չերւալին Կատարօից վեր ելնող մի քանի չեր- նօգօրցի կանալք՝ գլխների վրայ երեր բարձած, առաջները արած քշելով մի քանի ջորիներ, մենք ամենեին չէինք կար- ծիլ, որ մարդաբնակ երկրում ենք գտնուում:

Ճանապարհի պտոյտները գեռ չեն վերջացել. քանի բարձ- րանում ենք, այնքան նորերն են բացւում մեր առաջ: Ճա- նապարհը քանի գնուում, վատանում է. նա նեղ է. շատ լր- ցուած է քարերով, որոնց վրայ սայթաքում են մեր ձիերի սմբակները: Ճանապարհի կողերը ոչինչ բանով պաշտպա- նուած չեն. Եթէ մի անզգոյշ քալլ անես, կըսլանաս դէպի անդունդը, և փշուր-փշուր կըլինես արդէն Աւստրիայում՝ ճանապարհին մի քանի անգամ ամպերի միջից կորելով-անց- նելով:

Իսկ մեր ձիերը հակառակի պէս մոլուած են ճանապար- հի իսկ եզրով գնալու, որով աւելի է աչքի զարնում մեր դրութեան վտանգաւորութիւնը:

Երկու ժամից աւել է, որ վեր ենք ելնում. ահա և կըտ- րուկ շաւիդներ, որոնցով մեզ տանում են ուղեցոյցները՝ ճա- նապարհը կարմացնելու համար. Նրանք մեզ հրաւիրում են ձիերից իջնել և վեր սողալ ով ինչպէս կարող է, ձիերի սան- ձից բռնած՝ մեր ետևից քաշելով. իսկ նրանք ետևից քշում են իսեղ անասուններին:

Այդ կերպով մենք վերջապէս դուրս ենք գալիս մեծ ճանապարհը, որ ամենից լայնը և երկարն է և որ շրջապտոյտ անցնում է այս լեռների լանջերով: Դա ապագայում պիտի լինի այն մեծ ճանապարհը, որ միացնելու է Դաղմատիան Չերնօգօրիալի հետ և որ արդէն Կատարօից հասել է նե- գուշ և շուտով պիտի հասցնուի մինչև Յետինիէ, որովհետև իշխան նիկողայոսը ցանկանում է, որ անպատճառ կարելի լինի շքեղ կառքերով ուղևորուել դէպի իր երկիրը:

Մեր ուղեցոյցները մեզ չեն բերել այդ ճանապարհով Կատարօից սկսած, վասն զի նա շատ երկար է. այնուամե- նայնիւ մենք շատ ուրախ ենք, որ նրա վրայ ենք ալժմ. մենք հեծանք ձիերը և արագ քշեցինք: Արդէն հասել ենք սա- րահարթերը. այլ ևս կոմաններ չըկան. հարթ ճանապարհն անցնում է ահռելի պարիսպի ծալրով և ահա լանկարծ մի քարակառակառ ապառաժից լեաոյ՝ մեր առաջ բացուեց նե- գուշի տափարակը:

Բոլորովին անակնկալ տպաւորութիւն է անում դաշտա- վայրը ալսպիսի բարձրութեան վրայ, ընդ նմին մարդաբնակ, գիւղերով, հօտերով, բուսականութեամբ պճնուած մի սարա- հարթ: Բայց այս ինչ երկիր է. որպիսի աղքատութիւն, ինչ չքաւորութիւն:

Ամենից առաջ ճանապարհորդին զարմացնում է եղանա- կի սուր փոփոխութիւնը. թւում է թէ Միջերկրական ծովի տաք ափերից լանկարծ ընկել ևս հիւսիսային բեւեռի երկիր- ները: Այս դաշտավայրում, որ 800 մետր բարձր է ծովի մա- կերեւոյթից, այժմ կարգից դուրս ցուրտ է և փչում է մշտա- կան պաղ քամի:

Զգում ես, որ այստեղ ամեն բան այլ է թէ բուսակա- նութիւնը, թէ ընութիւնը: Հետքն անգամ չըկալ այն ամե- նի, որ թողեցինք տիտանական վիմապատուարի ստորոտում: Այստեղ ցորնի և գետնախնձորի դաշտեր են. վտիտ, քարե- րով ծածկուած, բեխի և արդէն ցրտահար եղած կաղնի ծա- ռեր, իսկ գետնի վրայ տեսնում ես կանաչ, կարճ, վտիտուկ ձմեռուայ խոտ, ճիշտ ալնպէս, ինչպէս լինում է հիւսիսում:

Այս դաշտավայրն էլ սակայն իր հերթում շրջապատուած է սարերով: Նրանց գորշ կողերին տեղ-տեղ սեխն են տալիս ըեխի փոքրիկ անտառակներ, արդէն տերեւաթափ եղած և մերկ: Նրանց բարակ և յօդնաթիւ ճիւղաւորութիւնները հե- ռուից նմանում են կարմրաւուն գորգի և տարօրինակ ձեերով են պատկերանում ահաւոր ապառաժների մոխրագոյն ֆօնի

Վրայ: Խսկ կիբճերի խորերում երևում է սառը և խոնաւ անտառը, որի կատարին հանգչում է ամպը:

Նեգուշի գիւղերում խրճիթների կտուրները ծածկուած են չոր խոտով, իսկ պատերը առանց կրի մի կերպ շարուած են գորշագոյն քարերից, այնպէս որ հեռուից գիւղերը միախառն-ւում են զրջակալ ժայռերի հետ:

Բոլոր խրճիթներից ծուխ է բարձրանում. երեսու է:

Ոչխարների և այծերի հօտերը վերադառնում են իրենց աւազակի կերպարանք ունեցող հովիւների հետ:

Պաշտերում մի վոքր կենդանութիւն է երևում, ճանապարհին երևում են մարդիկ և բարձուած ջորիներ. սակայն որչափ տխուը է Զերնօգորիայի ալս անկիւնը:

Իսկ մեզ ասել են, որ Նեղուշը այդ երկրի ամենաբեր-
քի և բախտաւոր հովհաներից մինն է:...

Տղամարդիկ խմբուած են խղճուկ գինետների մօտ. օրը կիւրակէ է։ Նրանց վրայ կայ երկար կեղտոտ ճերմակ վերարկուներ ոչխարի մորթուց շինած. նրանք փաթաթուած են մի տեսակ բրդէ սև. շալերի մէջ երկար խոշոր ծայրերով, որ աղքատութեան, չքաւորութեան վերին բաղձանանքի նշանն է, մի փոքր դեռ վայրագ վիճակի վկան. սակայն այդ ամենն է, որ այս ժողովրդին դարձնում է մեր աչքում գրաւիչ:



III

ՆԵԳՈՒԵԴԻՑ ՄԻԱՅ ՅԵՏՏԻՆԻԵ.



մպերի դէմ ցուըտ քամին շարունակ պատերազ է մղում և յաջողում է պատռել թուխպերի թանձր ծածկը, որ ամբողջ օր թուլ չըտուաւ մեզ արևի երես տեսնել: Աերջին կոհակը շառաչմամբ խփեց մեր երեսին անձրև-ա-ե-խլօրիկախտոն, ու վերջացաւ ամեն բան. երկինքը պարզ է և մաքուր:

Մենք անցանք Նեգուշը և կրկին ուղղւում ենք դէպի
սարերը, ուր մեր առաջ կան նոր կռմաններ, որոնցից պէտք
է, ել վեր բարձրանալ. բայց ի՞նչ ստոլիներ են այս. այդ՝ իշ-
խան Նիկողայոսի ծրագրած հոքակաւոր ճանապարհն է Զեր-
նօգօրիալի: Այդ կռմանը գեռ նոր է փորւում: Սրաթեք լան-
ջերով աւազաքարից պատեր են դրուած, որ դէմ կենան քա-
րերին և խճերին, որով պիտի ծածկուի ճանապարհի լատա-
կը. երևում է, որ այստեղ մշակներ են բանում. ամեն ինչ
տակն ու վրայ է արած և փորփրած. ընկած են ցիցեր՝ ճա-
նապարհի մէջ տեղը, բիհրեր, թիեր, բահեր, քուլունկներ.

տեղ-տեղ դարսուած են քարերի կանոնաւոր կոյտեր. երեսում են քերձերում սև ծակեր վառօդով պալթեցնելու համար, ցրուած քարերի խոշոր կտորներ: Սկզբում մենք ստիպուած էինք գնալ քայլ-առ-քայլ, յետոյ ստիպուեցանք իջնել ձի-երեց և թողնել նրանց, որ իրենց կամքով վեր գնան, ինչ-պէս կարող են: Մեր ուղեցոլցները պատճառելով թէ իրենք ոտով են, անլայտացել են, կարձ կածանով վերելք անելու համար: Արևն արդէն բոլորպին խոնարհուել է. մենք եր-կիւղ ենք կրում չըլինի մութն ընկնենք այս անձունի խուլ վայրերում. կարող է լինել, որ այս ժամանակ ողջ չը դուրս գանք այստեղից...

Եւ ահա վերջապէս գագաթը. էլ աւելի վեր ելնելու տեղ չըկայ, մենք ամենաբարձր կէտի ծալիին ենք, որ կա-պանք է ասում գիւղացիների լեզուով:

Շատ ներքեում նեգուշը պարփակող լեռներից այն կող-մը՝ եիւում է մի անորոշ գիծ, դա է ծովի հորիզոնը:

Այդ նշանով մենք պարզ գաղափար ենք կազմում թէ ինչ զարհուրելի բարձրութեան վրայ ենք ելած:

Քամին հանդարտեց, երկինք մնաց պարզ, գեղեցիկ, բայց ցուրտ երեկոյ է:

Բոլոր խոչ ու խութերը վերջացան. ճանապարհը հիա-նալի է, նա այստեղ արդէն պատրաստ է և այդ կերպով գնում է մինչև Յետինիէ: Մենք կամաց վազցնում ենք ձիերը, որ մութը մեզ չըպատէ և յուշիկ-յուշիկ սկսում ենք վար իջ-նել լեռնակոյտերի հակառակ լանջով: Մեր առաջ բացուելի նորանոր տեսարանը մի ըոսէ դեռ ծածկում են մեզանից ժայռերը. մենք պատրաստ ենք մոռանալ թէ ինչ բարձ-րութեան վրայ ենք գտնուում:

.... Ապա լանկարծ մի ակնթարթում մեր առաջ բաց-ւում է անսահմանութիւնը: Սա ամբողջ Զերնօգորիան է մինչև Ալբանիա՝ մի հայեացքով ընդգրկած:

Սրա նման ոչինչ չի պատահել մեզ տեսնել մեր ան-հատնում թափառումների ժամանակ երկրագնդի երեսին:

Այս տեսարանն այնպէս անակնկալ է բացւում, այնպէս պակուցանող է, որ մենք ծարս եղուծ մնում ենք ընդարձա-ցած և նայում ենք իրար. ես լսում եմ ընկերներիս բացա-կանչութիւնները.

— Սա մի քարացած ծով է. . . .

— Կարծես լուսնի հանգած մակերեսովթը լինի. . . .

— Այն, ճիշտ հանգած մոլորակի է նման. . . .

Եւ սակայն մենք չորսս էլ շաա բան ենք տեսած մեր կեանքում. տիսուր աւագոտ անապատներն Աֆրիկայի. հիւսի-սի սառցալին դաշտերը. մռալլ, անսահման տափաստանները Ամերիկայի. մի խօսքով ամեն տեսակ տիրամած տեսարան-ներ ծովի և ցամաքի վրայ, բայց այս որ տեսանք Զերնօգո-րիայում բոլորովին մի ուրիշ տեսակ բան է...

Բուսականութեան և կեանքի ոչ մի նշան. ժայռերի թագաւորութիւն, բարձր գագաթներ, որոնց գիտում ես էլ աւելի բարձր տեղից. անծալը լեռնաշղթաներ, որոնք հեծ-նում, իրար վրայ են բարձրում, կոհակների նման, որոնց մղում է հողմը...

.... Եւ ձգւում է, ձգւում է դէպի երկնակամարը այս սառած քասով. անսովոր բարձրութեան վրայ հրապուրիչ պատկերներ են փուլում. հեռու, Ալբանական լեռները իրենց յաւերժական ձիւնով ծածկուած կատարներով շրջապատում են գժոխալին ծովը և անջատում են երկինքը երկրից տըժ-գոյն սպիտակաւուն շերտով:

Արեգակը, որ արդէն մալը էր մտել լեռների ետևը, ձը-գում է իր վերջին փայլը այդ տիսուր անապատի վրայ. կիր-ճերում ընկած է երեկոյեան գորշ մշուշը, իսկ լեռնաշղթանե-րը ծիրանեգոյն ներկուել են հիւսիսափալի նման... «Լուս-նական տեսարան է»: Այս, կարծում ես թէ օդապարիկով ըն-



ընկել ես լուսնի վրան, տեսնում ես նոյն պատկերները նրա խորհրդաւոր մակերևոյթի վրայ, որ զուրկ է օդից:

Սրա նման մէկ ուրիշ վայր չը կայ երկրի վրայ: Սա մի աշխարհային յեղաշրջումն է, քահոսի մի մնացորդ է:

....Մարդիկ ուր են այստեղ ապրում, ինչով են կերակրուում, ինչ են անում այս տեսակ երկրում. ինչի՞ է պէտք այս ճանապարհը, ուր է տանում նա:

Վրայ հասաւ գիշերը և ամեն ինչ անյայտութեան մէջ ընկաւ. մենք քշում ենք ձիերը ճանապարհն այժմ շատ լաւ է, բայց էլի առանց պատուարի է և ձիերն էլ առաջուան պէս ճանապարհի եզրովն են գնում, որի կողքից բացւում է ահռելի խոր անդունդ:

Ժամի վեցն է: Բոլորովին մթնել է. պարզ երկնակամարի վրայ վառւում են աստղերը. շատ ցուրտ է. առաջներիս ոչինչ չի երևում, բացի ահագին խոշոր քարերից:

Յանկարծ ճանապարհի մի պտոյտում երևում են մեր ուղեցոյցները շնչառապառ. շատ լաւ եկանք, պարոններ, ասում են նրանք. դարձեալ ժամուկէս՝ և մենք հասած ենք...

Նրանք դուրս եկան ճանապարհը և իշան դէպի մի ուրիշ ձոր:

Քար, քար, քար. ամեն ձեի, ամեն կերպի, կանգնած, կողքի ընկած, քարերի կառկառներ, քարերի բուրգեր, քարերի դաշտեր. ամեն տեղ մռայլ պատառուածքներ, ձորեր, անտակ անդունդներ և համատարած մեռելային լոռութիւն:

Ժամի եօթն է: Վերստին երեացին մեր ուղեցոյցները և այս անգամ էլ չըհեռացան մեզնից. նրանք մեզ խնդրեցին հանդարտ քայլով գնալ, խնայել ձիերին և իրենց, որովհետև երկուսն էլ յօգնած են. այս ասելով նրանք ընկնում են ձիերի առաջ, որ արագ չըքշենք:

Վերջապէս մի ճրագ փայլեց հեռու-հեռու, ինչպէս երազում կամ հեքեաթի մէջ պատմածի նման և առա նկա-

տելի եղան ուրիշ քազմաթիւ ճրագներ. տարօրինակ և անակնկանակ պատկեր այս մռայլ անապատալին գաւառում:

— Այդ է Ցետինիէն, կոչում են ուղեցոյցները:

Այժմ երկիրը մեզ նուազ ամայի է թւում: Այստեղ, այնտեղ երևում են մութ խոշոր գունդեր, ինչպէս երևում է, ծառերի արուագիծեր են. մէկ-մէկ փայլում են աւելի մօտեղող խրճիթի ճրագները. հանդարտութեան մէջ լսում են շների հաջոց, մինչև իսկ մարդոց խօսակցութիւն: Մենք մօտենում ենք... Յանկարծ մենք ոտ ենք դնում մի դաշտի վրայ, որն երևի եօթ ութ հարիւր ոտնաչափ ծովի մակերեւոյթից բարձր է և որը սակայն հարթ-հաւասար է, ինչպէս գետի ողողած մի հովիտ. կրկէսի նման մի տեղէ սա, շրջապատուած լեռներով, մի օազիս՝ քարքարոս անապատի մէջ. ահա այս դաշտի վրայ է շինուած Ցետինիէն: Ճրագներն աւելի և աւելի են մօտենում: ճանապարհն այժմ աւելի լայն և ուղիղ է, մարդ մի տեսակ հանգստութիւն է զգում: Ահա ճրագի լոյսը բոլորովին աչքիդ առաջին է փայլում: Ահա նշանարւում են առաջին տները...

Մենք մտնում ենք մի բաւական լայն փողոց, որի երկու կողմը շարէշար շինուած են ցածրիկ, սպիտակ տներ. փողոցում վառուում են լապտերներ:

Մենք աւելի տրամադրուած էինք այստեղ ըուերի, արծիւների ըների նման քերձերին կպած խրճիթներ տեսնել. բայց ընդհակառակը սա մի մաքուր, լատակադուած քաղաք է, խաղաղ և պատուաւոր հակապատկեր է կազմում իր ո-ազմանէր բնակիչներին, որոնց կերպարանքը շատ տեղ մեզ աւազակային երևաց:

Երեւում են արևելեան ձեի փոքրիկ խանութներ. ներսը նստած է խանութպանը, որը հագած է ոսկեթել ասեղնագործուած պաճկոն:

Հանդիպում ենք մարդկանց փոքրիկ խմբերի, որոնք հետաքրքրութեամբ մեզ են նայում. մարդիկ քաջակապի են,

շում է ձեզ. երևակալութեանս մէջ խառնուած են այսօրուայ անցած ճանապարհի մուայլ պատկերները...

Մենք մտնում ենք մեր սենեակները — պարզ և մաքուր ննջարանները. ցուրտ է, թէպէտ կրակարանում փայտ է վառուում. պատուհանի ապակիները սառած են:

Դուրսը, ներքեւում՝ չերնօգորշի ծառաները և բարապանները լուշիկ-լուշիկ նուագում են իրենց ռազմական երգերը. այդ օրօրին ականջ դնելով, շուտով մենք խորասուզում ենք Մորֆէոսի գըկում:

Առ վերաբկուներ ուսերին ձգած, մեծ, փայլուն, արծաթապատ դաշունը գոտիկից կախած:

Քաղաքի կենտրօնում ձիապաները հրաւիրում են մեզ իջնել մի վայելուչ տան առաջ. դա հիւրանոցն է:

Ամբողջ եօթ ժամ մենք ձիի վրայ նստած՝ ուղևորութիւն ենք արել:

Հիւրանոցը նպաստ է ստանում նիկողայոս իշխանից, որ դրան շինել է եկուոր եւրոպական դիպլոմատների և լրագիւների թկթակիցների համար. վասն զի քաղաքական պատճառներով Եւրոպան բաւական ուշադրութիւն է նուիրել այդ երկրին: Երեսում է ամեն կերպ աշխատել են հիւրանոցի ներքին սարք ու կարգի վրայ:

Պէտք է մտածել, որ այդ զանազան իրեղէնները, որն անձունի, որը մօդից ընկած արդէն, բերուել են Աւստրիայից, էլ ով գիտէ որտեղից, բարձած էշեքի վրայ և գուցէ կանանց իսկ մէջքի կամ գլխի վրայ:

Մենք մտանք մի փոքրիկ դահլիճ, ուր ճաշ կերանք. ծառալում էր մի արագաշարժ խտալուհի-աղախին:

Արդէն գիշերուայ ժամը տասն է. Ցետինէի համար դաշտ ուշ միջոց է. փողնցներում ոչ մի շունչ չըկալ. տուն ու դուռ փակ են. փոքրիկ լապտերները աղօտ կերպով պապղում են: Ցուրտ է: Եղեամը փայլում է տանիքների վրայ, գետինը նմանապէս նրանով ճերմակւում է տների պատերի նման: Գեղեցիկ, պարզըկայ, ձմեռուայ գիշեր է. օդը մաքուր և պաղ է. տիրում է լուսութիւն և հանդարտութիւն: Զգում ես, որ գտնուում ես ամեն բանից կտրուած, հեռու, մի խուլ, փոքրիկ աշխարհում, որ կենում է մենիկ, սահմանափակ կենցաղագարութեամբ: Մի տեսակ թախծութիւն է գալիս մարդու վրայ, տեսնելով այս գիւղը խաղաղ նիւհման մէջ, թւում է թէ խոր ծմակի մէջն ես կամ շատ խուլ մի կղզիի վրայ:

Ոկամայ աչքիդ առաջին պատկերանում է այս տխուրտուում, ապառաժուտ անապատը, որ շրջապատում է և ճըն-



Աղախինը մի սիրուն աղջիկ է, դէմքի սուր գծագրութիւնով:

Խսկապէս բաւական է հիւրանոցի պատուհանից նայել՝ ամբողջ Յետինիէն տեսած լինելու համար. համարեա մի հատիկ լայն փողոց է, համեստ փոքրիկ տներով: Յուրա է. սենեակը հոսող օդը թարմ է և մաքուր. զգում ես, որ լեռնալին աշխարհում ես. ջրջակայ բարձրութիւնները ձիւնով ծածկուած են և պսպղում են առաւօտուայ պայծառ արեկից:

Գլխաւոր փողոցում՝ արեւում պտտում են երկրի զանազան գաւառտակետները՝ հագած իրենց հանգիստոր շքեղ զգեստը և գինուած փալլուն, ճոխ զէնքերով. նրանք խօսում են ոգևորուած:

Կողմնակի մի փողոցից դուրս եկաւ մի հասակաւոր տըղամարդ, բաց-կապուտ սակեզօծ ասեղնագործ պաճկոն հագած: Դա իշխան նիկողայոսն է, երկրի պետը. նրան սպասողները խորը գլուխ են տալիս, ոմանք համբուրում են նրա ձեռը, ոմանք խնդրագրեր են մատուցանում:

Սառում են, որ իշխանը սովորութիւն ունի բայօղեայ կատարել՝ իր կառավարչական պարտաւորութիւնները: Ի՞նչ նահապետական սովորութիւն:

Այդ պաշտօնական տեսակցութիւնից լետու իշխանը մըտնում է իր ապարանքը, որի մուտքի առաջ կանգնած է մի խոշորամարմին պահապան, աև ծոպաւոր շալն ուսերին:

Ամեն ինչ մանրանկար ձևու կայ Յետինիէում. փոքրիկ տպարան, որ տպում է չերնոգօրական մի պստիկ լրագիր. փոքրիկ զօրանոցներ, փոքրիկ հիւանդանոց, փոքրիկ փոստային գրասենեակ, ուր սակաւաթիւ նամակներին կպցնում են մարկաներ իշխանի պատկերով:

Չերնոգօրի հարուստ, աղքատ, իշխան, ուամիկ, ամենքն էլ հաւատարիմ են իրենց նիստ ու կացի և տարազի աւանդական ձեերին:

Յետինիէում տները ինչպէս դըսից, այնպէս էլ ներսից

VI

ՅԵՏԻՆԻԷ.



ուաւօտեան ամեն տեսակ՝ ուրախական ձայներ լսուեցան մեր սենեակում և արթնացրին մեզ. ճնճղուկները ճռուղում են տանիքի վրայ, աքաղաղները կանչում են, հաւերը քրքչում են, ոչխարները մայում են, աղախինը երգում է սլաւօնական հիմնը:

Գիշերուայ ցուրտը բարակ, թափանցիկ, սառուցի նախուն շերտով ծածկել է պատուհանների ապակիները. բայց լաւ երեսում է նրանց միջով պայծառ երկինքը և ճաճանչափայլ արեգակը.

Այս խաղաղ վիճակը, գիւղական այս հաճելի հնչիւնները և այս շինական պարզութիւնը մեզ վրայ արթնանալիս հովուական կեանքի տպաւորութիւն են թողնում:

Աղախինը, ինչպէս սովորութիւն է Արևելքում, մեզ մատուցանում է կրակի վրայ եփած մի փոքրիկ գաւաթով սև սուրճ:

Խիստ մաքուր են. սարքն ու կահկարասիքը շատ պարզ են. պատերը ճերմակացրած են կիրով և բաց կապուտ երևակայական նախշերով ներկած շատերինը. ամեն տան անկիւնում անշուշտ կան սրբելի պատկերներ:

Դէպի գլխաւորը եկող շեղ փողոցներից մէկի վրայ դըտնում է իշխանի ապարանքը, որ նման է մի կալուածատէրի գիւղատան. ապարանքի մի կողմից բակն է, միւս կողմից մի հասարակ տիսուր պարտէզ, ուր ընկած են չերնօգօրջիների մշտնջենական սոսիս տաճիկներից առնուած թնդանօթները:

Այժմու պալատի մօտ գտնւում է հին իշխանների աւելի համեստ ապարանքը, կայ ալդ տեղ և մի շատ հին վանք ժայռերին կպած: Ժայռի գագաթին կայ մի հին աշտարակ, որի ծայրին ցցի վրայ էին բարձրացնում տաճիկների գլուխները:... Այժմ ալդ սովորութիւնը թողած են և աշտարակում կախուած է ռուս թագաւորի համարիւն չերնօգօրջիներին նուիրած մի մեծ զանգը, որը դողանջում է իր բամբականով միայն տօն օրերին:

Վանքին կպած մի դահլիճում, որ ամբարի է նման, մեզ ցոյց են տալիս մենաստանի ծանրագին զարդերը, ճոխ և ճարտարարուեստ թագեր, սալաւարտներ, մասունքների ոսկի, արծաթի տուփեր և այլ եկեղեցական սպասներ, անօթներ, զարդեր:

Իշխանի եկեղեցին փոքր է, ցած ու մութ-մուալ. մուտքի երկու կողմում գտնւում են հանգուցեալ և տաճիկների հետ մղած պատերազմներում նահատակուած իշխանների գերեզմանները, ծածկուած ասեղնագործ ծածկոցով, վրան դրած խաչ, սուխններ, թրեր... պատկերները խաչկալի և պատերի խիստ հին են և սկած. Նրանք ծածկուած են ոսկու և արծաթի հաստ թիթեղեալ զարդերով, զգեստի և պսակի ձևով, շատերը ընդելուզուած են թանգագին ակներով:

Երբ, ինչպէս կարծում են դիպլօմատները, կըկազմուի հարաւալին ոլաւօնական կայսերութիւնը, այն ժամանակ Զեր-

նօգորիան և այս սրբավայրերը կըլինին կայսերութեան՝ այսպէս ասած սաղմական, հիմը կազմող, ամենասրբազան իշխատակարանները և լուշարձանները. իսկ իշխանի ցեղը պետութեան ամենահին տոհմը:...



քերը, որոնք ժառանգաբար անցնում են որդուոց-որդի:

Կանալք առնացի կազմուածք ունին, տղամարդիկ բարձրահասակ, քաջակազմ, գեղեցիկ և պատերազմողի կերպարանք ունին, չեմ ուզում ասել աւաղակալին:

Զերնօգօրցին երբեմն ծախում է իր տարեկան ստացած բոլոր բուրդը կամ դաշտալին բերքը՝ զէնքեր գնելու համար. դրանով ահեղ օսմանցիներին անպարտելի մի ոսոխ եղած՝ դարերով անկախ ազգալին կեանք ունեցան, որով գրաւեցին Եւրոպալի հիացումը և պաշտպանութիւնը:

Մեր ձիերը քշում ենք արագ-արագ, կտրելով անցնում ենք Նեգուշի սարահարթը. վեր ենք ելնում ամենաբարձր կէտը, որից պիտի սկսենք իջնել դէսի միջերկրականը. այդ տեղ մենք ձգում ենք մի վերջին հայեացք Զերնօգօրիալի վրայ. լուռ հանդարտութիւն և անվրդով խաղաղութիւն է տիրում համատարած Զերնօգօրիալի վրայ. Զերնօգօրիան մի վիմոտ երկիր է, ուր ամեն ինչ գորշ գոյն ունի:

Մենք մօտենում ենք այն զարհուրելի փապարներին, որտեղից պիտի իջնենք Դաղմատիա. մեզնից ցած սուրում են ժայռերի վրայով ամպերը. նրանցից ներքև Աւստրիական գաւառներն են երկում: Կատտարօի ծովածոցը սփռում է մեր առաջ, ինչպէս մի ահագին քարտէզ: Քաղաքները և գիւղերը իրենց բարձր զանգակատներով թւում են փոքրիկ շինութիւններ՝ կառուցած խոր անդունդի յատակում: Զերնօգօրեալից յեաու ծովափնեալ կանաչագեղ ու շէն վայրերը դիւթիչ գրաւչութիւն ունին:

Մենք սկսում ենք իջնել անհատնելի կոմաններով և պտոյտներով, որոնք հասնում են մինչև ներքեւ: Օդը թանձրանում է և տաքանում. անհուն և խաղաղ կտպուտակ ծովըն անսահմանաբար տարածուած է մինչև հորիզոնը, ջուրը կպած է երկնակամարին, որ բոսորալին գոյնով փալլատակուած է վերջնալուսի ճաճանչներով:

Արդէն նկատելի են Կատտարօի տանիքները. քաղաքն

γ

ԴԱՐՁ




ենք մնաս բարեւ ասացինք Ցետինիէին մի պայծառ առաւօտ. մտանք դարձեալ քարքարոտ անապատները. սակայն երեւում են տեղ-տեղ փոքրիկ դաշտեր. պէտք է երեակայել թէ ինչ դաշտեր են դրանք և թէ ինչպէս են գոյացել: Զերնօգօրցի կինը գտնելով մի քիչ հարթ տեղ, շատ անգամ մի օրուայ ճանապարհ գիւղից հեռու, սկսել է այդ կլոր կրկէսի նման տեղը նախ մաքրել քարերից, նրա չորս կողմը դարսելով ցացրիկ պատի նման. լետոյ սկսել է մէջքով հող ժողովել՝ քարափների տրանքներից և ցանքս անելու փոքրիկ դաշտեր կազմել:

Ահազին քարալին ձորերի մէջ կամ ժայռերին կապած՝ մենք նշմարում ենք չերնօգօրական աղքատիկ գիւղեր, որոնք արծուի բների են նման ծերպերում ապաստանած:

Խրճիթները խճալի են և անշուք. սակայն նրանց իւրաքանչիւրի մի անկիւնում փայլում են թանկագին տուրք պատկերները և ծեղունից կախուած պսպղուն արծաթապատ զէն-

պարտէզների և ալգիների սաղարթախիտ ծառերի արանքից
նշմարելի են ճրագի այսաեղ-այնտեղ վառուող լոյսերը. գի-
շերը արագ վրայ է հասնում, մտնում ենք քաղաքի ոլոր-
մոլոր փոլոցները. լուսում են աւստրիական զինուորական ե-
րաժշտութեան նուագները - Նտրառուսի վալ'սը. մենք լուսա-
ւորեալ և քաղաքակրթուած աշխարհում ենք դարձեալ. Տա-
սը ժամն է. հիւրանոց Որսկան....



- 821 E [cas
- 509h

Sept 23 1981 3

29 / 11 58 7 8

7-11
39/b 8/s
E/29 8/s
S/33 8/s
6/5001 8/s

$$\begin{array}{c} \overline{59} \\ -1 \\ \hline 58 \end{array} \quad \begin{array}{c} 7 \\ + \\ 7 \\ \hline 14 \end{array} \quad \begin{array}{c} 1 \\ + \\ 6 \\ \hline 7 \end{array} \quad \begin{array}{c} 8 \\ + \\ 7 \\ \hline 15 \end{array}$$

$$\begin{array}{r} \frac{3}{4} = \frac{1}{2} \\ \frac{1}{2} \quad \frac{3}{4} \\ \hline \frac{3}{4} \end{array}$$

$\frac{3}{4} = \frac{3}{4}$

$$\begin{array}{r} \frac{1}{16} \\ \frac{1}{16} \\ \hline \frac{2}{16} \end{array}$$

~~subtracted~~

$$\begin{array}{r} \frac{10}{16} - \frac{3}{16} \\ \hline \frac{7}{16} \end{array}$$


$$\begin{array}{r} \frac{3}{2} \\ \frac{3}{2} + \frac{1}{2} \\ \hline \frac{8}{2} \end{array}$$

$$\begin{array}{r} \frac{27}{28} - \frac{5}{28} \\ \hline 5 \end{array}$$

$$45 \quad \begin{array}{r} \frac{3}{3} \\ \frac{1}{3} \end{array} \quad 4 \quad 3$$

~~subtracted~~ 1

0003629



~~subtracted~~ 1

~~subtracted~~ 1

~~subtracted~~ 1

~~subtracted~~ 1



NL0003629

7581



NL0003629

352